

Հարգելի հաճախորդ,

Քարից քարտ փոխանցում իրականացնելուց առաջ, խնդրում ենք ծանոթանալ կայքում գետեղված հայտարարություններին, սակագներին, սահմանաչափերին և այն երկրների ցանկին, որոնց կողմից թողարկված VISA քարտերին հնարավոր չէ կատարել փոխանցումներ:

Քարտից քարտ փոխանցում իրականացնելու համար անհրաժեշտ է լատինատառ լրացնել հետևյալ դաշտերը.

- Գործարքի գումարը/**Գումար**/,
- Ընտրել գործարքի արժույթը/**Արժույթ**/,
- Գումարը փոխանցող քարտապանի հասցեն/**Ուղարկողի հասցե**/,
- Գումարը փոխանցող քարտապանի քաղաքը/**Ուղարկողի քաղաք**/,
- Գումարը փոխանցող քարտապանի երկիրը 3 տառանի կոդով/**Ուղարկողի երկիր**/, օրինակ Հայաստանի համար լրացվում է ARM,
- Գումարը փոխանցող քարտապանի փոստային ինդեքսը/**Ուղարկողի փոստային ինդեքս**/, փոստային ինդեքսը բաղկացած է 4 նիշից, օրինակ 0010,0024: Ձեր փոստային ինդեքսին կարող եք տեղեկանալ Հայփոստի պաշտոնական կայքից սեղմելով հետևյալ հղումը <https://www.haypost.am/hy/our-network>,
- Փոխանցումը ստացող քարտապանի անվանումը/**Ստացողի անուն**/, օրինակ Aramyan Aram:

Card2Card փոխանցում

Գումար*	<input type="text" value="100"/>
Արժույթ*	<input type="text" value="AMD"/>
Ուղարկողի հասցե*	<input type="text" value="V. Sargsyan 26/1"/>
Ուղարկողի քաղաք*	<input type="text" value="Yerevan"/>
Ուղարկողի երկիր*	<input type="text" value="ARM"/>
Ուղարկողի փոստային ինդեքս*	<input type="text" value="0028"/>
Ստացողի անուն / ազգանուն*	<input type="text" value="Aramyan Aram"/>

Տվյալները մուտքագրելուց հետո պետք է սեղմել **Շարունակել** ստեղծը, որից հետո էկրանին կհայտնվի վճարման էջը, որտեղ անհրաժեշտ է լրացնել.

- Ձեր քարտի ամբողջական համարը/**Քարտի համար**/,
- քարտի ետնամասում նշված CVC2/CVV2 կոդը/**CVC2/CVV2 կոդ**/,
- քարտի վերջնաժամկետը՝ ամիս, տարի/**քարտի վերջնաժամկետ**/,
- քարտապանի անուն ազգանունը/**Քարտապանի անուն**/

- փոխանցումը ստացող քարտապանի քարտի ամբողջական համարը /Փոխանցումը ստացող քարտի համար/

ConverseBank

Գումար <input type="text" value="100.00 AMD"/>	Ստացողի քարտի համար <input type="text" value="4276400054875212"/>
Փոխանցողի անուն / ազգանուն <input type="text" value="HUNANYAN HUNAN"/>	Ստացողի անուն / ազգանուն <input type="text" value="Aramyan Aram"/>
Փոխանցողի քարտի համար <input type="text" value="4847030012878562"/>	Ուղարկողի հասցե՝ 0028 ARM, Yerevan V. Sargsyan 26/1
Քարտի ժամկետ <input type="text" value="Յունիս"/> <input type="text" value="2020"/> <input type="text" value="..."/>	CVC2/CVV2

[Ստանալ միջնորդավճարը](#)
Միջնորդավճար:
Ամբողջ գումարը:

Տվյալները մուտքագրելուց հետո պետք է սեղմել **Ստանալ միջնորդավճարը** ստեղծը: Եթե տվյալ քարտատեսակի համար սահմանված է փոխանցման միջնորդավճար, ապա **Fee** դաշտում ցույց կտրվի միջնորդավճարի գումարը, իսկ **Total Amount** դաշտում քարտից գանձվելիք ամբողջ գումարը/ներառյալ միջնորդավճարը/: Բացի կայքում նշված միջնորդավճարից տվյալ գործարքի տեսակի համար կարող է նաև միջնորդավճար կիրառվել Ձեր քարտը թողարկող բանկի կողմից: Խնդրում ենք նախքան գործարքի կատարումը տեղեկանալ Ձեր քարտը թողարկող բանկի միջնորդավճարների:

[Ստանալ միջնորդավճարը](#)

Fee: 500
Total Amount: 600

Կատարել փոխանցում

Վճարման էջում լրացված տեղեկատվությունը ևս մեկ անգամ ստուգելուց հետո սխալներ հայտնաբերելու դեպքում պետք է հետ գնալ թարմացնել էջը և գործարքը սկսել սկզբից, իսկ սխալներ չհայտնաբերելու դեպքում պետք է սեղմել **Կատարել փոխանցում** ստեղծը, որից հետո Ձեր գործարքը կտեղափոխվի «ԱրՁա» պրոցեսինգային կենտրոնի կայք, որտեղից, սեղմելով **Send password** ստեղծը, Ձեր՝ Բանկում SMS ծառայության համար գրանցված բջջային հեռախոսահամարին, էլ. փոստի դեպքում էլ փոստի հասցեին կուղարկվի մեկանգամյա անվտանգության կոդը:



Purchase confirmation

Enter password to confirm operation

Merchant : VISA DIRECT
Amount : AMD 100.00
Date : 06/08/2018
Card number : *****9997
One-Time Password :

[Send password again](#)

[Cancel](#)

[Help](#)

SMS հաղորդագրության կամ էլ. փոստի միջոցով ստացված մեկանգամյա անվտանգության կոդը համապատասխան դաշտում մուտքագրելուց հետո սեղմում եք **Submit** ստեղծը:

Ուշադրություն: **Send password** ստեղծը սեղմելուց մինչև **Submit** ստեղծը սեղմելը ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի 5 րոպեն, հակառակ դեպքում պետք է կրկնել վճարման փորձը:

Վճարումը բարեհաջող ավարտվելուց հետո Եկրանին կհայտնվի վճարման կտրոնը, որը կարող եք տպել, ինչպես նաև կտրոնը ավտոմատ կուղարկվի Ձեր էլ. հասցեին, և կպահպանվի վճարումների պատմության մեջ:

Card2Card փոխանցում

Շնորհակալություն, գործարքը կատարված է:

Փոխանցված է 100 AMD

Կոնվերս Բանկ ՓԲԸ
ԳՂ 0010, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/1,
Պեռախոս՝ (374 10) 511200, 511211

Քարտից բարտ փոխանցում
Ստացող բարտի համար: 545479**5157
Ստացող բարտապանի ԱԱ: Aramyan Aram

Ամսաթիվ: Օգոստոս 19, 2019 10:39:28
Տեղմիևայի համար: 27533333
Քարտի համար: 484703**9997
Քավաստագրման կոդ: 250715
Գումար: 100 AMD
Գործարքի կարգավիճակ:
Քաստատված է
.....
ՇՆՈՐՔԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ
.....

Վճարման անհաջող ավարտի դեպքում Եկրանին կհայտնվի գործարքի մերժման վերաբերյալ հաղորդագրություն:



Գործարքի մերժման պատճառ կարող են հանդիսանալ.

- Փոխանցող կամ փոխանցումը ստացող քարտի կարգավիճակը,
- Փոխանցող քարտի անբավարար մնացորդը,
- Գործարքի սահմանաչափերի գերազանցումը,
- Փոխանցող կամ փոխանցումը ստացող քարտի թողարկող հանդիսացող բանկի կողմից սահմանված սահմանափակումները,
- Կապի խափանումը և այլն:

Խորհուրդ ենք տալիս առաջին հերթին կապ հաստատել Ձեր քարտը թողարկող բանկի հետ: